

մաձայն կանոնաց ընդհանուր ուսումնարանաց մերոց :

Հոգաբարձութիւնս օգտաւէտ համարեալ զ10,000 ռուբլին ետ ի շահեցումն , վաճառականական հաշուով , որոյ տոկոսեաց զ600 ռուբլին ամ ըստ ամէ ծախսելով ի պէտս զպրոցին , իսկ զ400 ռուբլին բարդելով ի վերայ մայր գումարոյն՝ վասն գնելոյ այնու զարդիւնաբեր կալուած ինչ ի մշտնջենաւոր ապահովութիւն զպրոցին :

Հոգաբարձութիւնս պատրաստեալ զպրոցն ամեն պարագայիւք՝ հրաւիրեալ է գուսուցիչս . որք են 1. բարձրապատիւ Մակար վարդապետն Բարխուղարեանց՝ ուսուցիչ Հայոց լեզուի և կրօնի : 2 պ. Սահակ Տէր Գրիգորեանց՝ ուսուցիչ ռուսաց լեզուի և թուաբանութեան , և 3 ուսուցիչ երգեցողութեան և վայելչագրութեան առայժմ չգտանի , և սակայն որոնեմք : Հոգաբարձութիւնս հանդիսաւոր կարգաւ բացեալ զԲուղաղեան վանական զպրոցն Սաղիանի վանից ի 5 սեպտ անցելոյ , սկսանել ետ գուսումն համաձայն ընդհանուր կանոնադրութեան , ուր ուսանին աշակերտք 56 . . . :

Զբացմանէ Բուղաղեան վանական զպրոցին աւետելով Չերզ վեհափառութեան խնդրեմ նախ՝ պաշտելի կոնդակաւ հաստատել զհոգաբարձութիւն յիշեալ զպրոցին , և երկրորդ՝ օրհնութեան կոնդակաւ օրհնել և խրախուսել զյարգոյ Բուղաղեան եղբարս , որք են պ. պ. Մովսէս , Եղիա , Ենովք , Սմբատ և Երուանդ :

Հոկտեմբերին , 1888 ստացայ Բագուայ մեր գործակալ Խորէն Աւագ քահանայի հմ. 213 յայտարարութեան հետ ուղարկած Բուղաղեան վանական զպրոցի հոգաբարձութեան Բագուաբնակ անդամներից ի 27 հոկտ. զըսած յայտարարութիւնը՝ 10,000 ռուբլին շահեցողութեան տալու համար , հետեւեալ բովանդակութեամբն :

Նորին բարձր սրբազնութիւն

Վիճակաւոր Առաջնորդի թեմին Հայոց Զամախուոյ , Տ . Մեսրոպ արքեպիսկոպոսի